Ֆիզիկական անձանց բանկային հաշիվներ

Տեղեկատվական ամփոփագիր

Հրապարակման ամսաթիվ՝ մարտ, 2024թ.

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայք՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Բովանդակություն

Ֆիզիկական անձանց բանկային հաշիվներ....1

1. Ընդհանուր դրույթներ 3

1.1 Բանկային հաշիվների տեսակներ 3

1.2 Հաշվի արժույթ 4

1.3 Նվազագույն հաշվեկշիռ 4

1.4 Բանկային հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ վճարվող տոկոսներ 4

1.5 Ամսական սպասարկման վճար (կիրառելի չէ HSBC PLUS և STATUS հաճախորդների համար)....5

2. Հաշվի բացման/փակման ընթացակարգը....5

3. Հաշվով հնարավոր գործառնությունները 6

4. Վեճերի լուծման կարգը 9

5. Ավանդների հատուցման երաշխավորման պայմանները և կարգը 9

6. Կարևոր նշումներ....10

1. Ընդհանուր դրույթներ

Սույն ամփոփագրում ներառված տեղեկատվությունն անհրաժեշտ է դիտարկել «Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի համար» (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) և «Ծառայությունների սակագներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար» (այսուհետ՝ Ծառայությունների սակագներ) ամփոփագրերում ներառված տեղեկատվության հետ միասին:

1.1 Բանկային հաշիվների տեսակներ

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) անհատ հաճախորդներին առաջարկում է բանկային հաշիվների հետևյալ տեսակները.

Ընթացիկ հաշիվ

Բանկային հաշվի (այսուհետ՝ հաշիվ) այս տարատեսակը նախատեսված է այն հաճախորդների համար, ովքեր պատրաստվում են հաշիվն օգտագործել հիմնականում առօրյա ֆինանսական գործառնությունների իրականացման, այլ ոչ թե ազատ դրամական միջոցների պահպանման նպատակով:

Այս հաշվով նպատակահարմար է իրականացնել բանկային այնպիսի գործարքներ, ինչպիսիք են՝ աշխատավարձի ստացումը կամ հաշվին մուտքագրվող այլ եկամուտների տնօրինումը, ժամկետային ավանդի տոկոսների ստացումը, վարկային քարտի կամ վարկային վճարումների կատարումը և այլ գործարքներ:
ֆիզիկական անձանց սույն հաշիվների համար չի սահմանվում նվազագույն մնացորդի պահանջ, սակայն առկա է հաշվի սպասարկման ամսական վճար: Անհատ ձեռնարկատերերի ընթացիկ հաշիվների համար, սակայն, կիրառվում է միջին եռամսյակային մնացորդի և նվազագույն տարեկան շրջանառության պահանջ:

Բանկն իր հայեցողությամբ ընթացիկ հաշվից կարող է Հաճախորդին տրամադրել չեկային գրքույկ:

Խնայողական հաշիվ

Հաշվի այս տարատեսակը նախատեսված է այն հաճախորդների համար, ովքեր պատրաստվում են հաշիվն օգտագործել ոչ միայն ֆինանսական գործառնությունների իրականացման, այլ նաև իրենց ազատ դրամական միջոցները Բանկում պահելու նպատակով:

Խնայողական հաշիվների համար չի կիրառվում ամսական սպասարկման վճար, եթե հաշվի միջին ամսական մնացորդը բավարարում է Բանկի կողմից սահմանված նվազագույն միջին ամսական մնացորդի պահանջին:

Հաշվի այս տեսակը հասանելի է միայն ֆիզիկական անձ հաճախորդներին:

Մինչև 18 տարեկան երեխայի հաշիվ

Հաշվի այս տարատեսակը նախատեսված է այն հաճախորդների համար, ովքեր ցանկանում են գումար կուտակել մինչև 18 տարեկան երեխայի համար, **ընդ որում հաշիվը կարող է բացվել ինչպես երեխայի ծնողի, խնամակալի կամ երրորդ անձի[1], այնպես էլ 14-18 տարեկան երեխայի կողմից: Այս հաշվի համար չի գործում ամսական սպասարկման վճար կամ միջին ամսական նվազագույն մնացորդի պահանջ՝** հանդիսանալով հարմար եղանակ երեխայի համար կարճաժամկետ և երկարաժամկետ խնայողություններ կատարելու նպատակով: Երեխայի 18 տարին լրանալուց հետո հաշվի տեսակը փոփոխվում է ընթացիկ կամ խնայողական հաշվի:

Էսքրոու հաշիվ

Հաշվի այս տարատեսակը հանդիսանում է հատուկ բանկային հաշիվ, որը կիրառվում է անշարժ գույքի առուվաճառքի գործարքի ժամանակ կողմերի (այն է՝ գնորդ և վաճառող) միջև հաշվարկների/վճարումների ապահով իրականացման համար:

Հաշվին մուտքագրվող Էսքրոու գումարը կարող է կազմել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Գնորդի կողմից Վաճառողին վճարման ենթակա ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

1 Երրորդ անձի կողմից հաշվի բացումը հնարավոր է միայն ժամկետային ավանդ ներդնելու դեպքում:

Գումարները բաշխվում են կողմերի միջև՝ Էսքրոու համաձայնագրով սահմանված կարգով, այն է՝

- **Վճարվում են վաճառողին.** Էսքրոու համաձայնագրով սահմանված ժամկետում անշարժ գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը հավաստող սեփականության իրավունքի գրանցման վկայականը կամ անշարժ գույքի առուվաճառքի նոտարական կարգով վավերացված պայմանագրի մեկ օրինակը Բանկին ներկայացնելու դեպքում,

կամ

- **Վճարվում են գնորդին**. վերոնշյալ փաստաթղթերը Էսքրոու համաձայնագրով սահմանված ժամկետում Բանկին չներկայացնելու կամ սահմանված ժամկետում անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքից ծագող գնորդի իրավունքները մերժելու մասին անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված փաստաթղթի բնօրինակը Բանկին ներկայացնելու դեպքում:

1.2 Հաշվի արժույթ

Ընթացիկ և խնայողական հաշիվները կարող են բացվել ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, Մեծ Բրիտանական ֆունտ ստերլինգով, ՌԴ ռուբլով, Չինական յուանով և Ճապոնական յենով, ԱՄԷ դիրհամով, Ավստրալական և Կանադական դոլարով, Շվեյցարական ֆրանկով:

Մինչև 18 տարեկան երեխայի հաշիվը կարող է բացվել ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Էսքրոու հաշիվը կարող է բացվել միայն ՀՀ դրամով:

Ուշադրություն. ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվը ենթադրում է արտարժութային ռիսկ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել:

1.3 Նվազագույն հաշվեկշիռ

Ֆիզիկական անձանց համար, անկախ հաշվի տեսակից, չի գործում նվազագույն մուտքի կամ հաշվեկշռի պահանջ[1]:

Անհատ ձեռնարկատերերի հաշիվների սպասարկման նվազագույն պահանջները և սակագները սահմանվում են ըստ «Ծառայությունների սակագներ» փաստաթղթի:

1.4 Բանկային հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ վճարվող տոկոսներ

Հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ կիրառվում է 0% տոկոսադրույք:

1 Խնայողական հաշվի դեպքում գործում է միջին ամսական նվազագույն մնացորդի պահանջ՝ 100 000 ՀՀ դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով: Պահանջը չբավարարելու դեպքում գործում է ամսական 2 000 ՀՀ դրամ սպասարկման վճար:

1.5 Ամսական սպասարկման վճար (կիրառելի չէ HSBC PLUS և STATUS հաճախորդների համար)

Ընթացիկ հաշիվ	300/500 ՀՀ դրամ[1]
Խնայողական հաշիվ	Չի կիրառվում
Մինչև 18 տարեկան երեխայի հաշիվ	Չի կիրառվում
Էսքրոու հաշիվ	Չի կիրառվում[2]

Ընթացիկ և խնայողական հաշիվների դեպքում ամսական սպասարկման վճարը (կիրառելիության դեպքում) գանձվում է անկախ այն հանգամանքից՝ հաշիվն օգտագործվում է, թե՝ ոչ:

Խնայողական հաշվի դեպքում գործում է միջին ամսական նվազագույն մնացորդի պահանջ՝ 100 000 ՀՀ դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով: Պահանջը չբավարարելու դեպքում գործում է ամսական 2 000 ՀՀ դրամ սպասարկման վճար:

Վճարը չի կիրառվում, եթե ընթացիկ/խնայողական հաշիվն օգտագործվում է ժամկետային ավանդի մարման և/կամ ժամկետային ավանդի տոկոսների վճարման համար:

Հաշիվների, դրանցով կատարվող գործառնությունների, ինչպես նաև քաղվածքների վերաբերյալ այլ տեղեկությունների տրամադրման համար կիրառելի սակագները սահմանվում են Ծառայությունների սակագներով, որը հասանելի է Բանկի մասնաճյուղերում և ինտերնետային կայքում՝ www.hsbc.am:

2. Հաշվի բացման/փակման ընթացակարգը

Բանկում հաշիվների բացման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող և բնակվող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և փախստականի կարգավիճակ ունեցող անձանց համար՝

1. Բանկային հաշվի բացման դիմում՝ ստորագրված ֆիզիկական անձի կողմից
2. Անձնագիր/անձը հաստատող այլ փաստաթուղթ
3. Հանրային ծառայությունների համարանիշի վերաբերյալ հետևյալ փաստաթղթերից մեկը.

- Նույնականացման քարտ
- Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ)
- Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանք
- Հանրային ծառայությունների համարանիշ ստանալու վերաբերյալ ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանք

4. Անհրաժեշտության դեպքում Բանկի պահանջով այլ տվյալներ և/կամ փաստաթղթեր

Օտարերկրյա քաղաքացիների համար՝

1. Բանկային հաշվի բացման դիմում՝ ստորագրված ֆիզիկական անձի կողմից
2. Անձնագիր/անձը հաստատող այլ փաստաթուղթ[3]
3. Անհրաժեշտության դեպքում՝ Բանկի պահանջով այլ տվյալներ և/կամ փաստաթղթեր:

1 500 ՀՀ դրամ ամսավճարը կիրառելի է Անհատ ձեռնարկատերերի համար:
2 Էսքրոու հաշվի բացման համար գնորդը և/կամ վաճառողը Բանկին վճարում են ծառայության վճար՝ Էսքրոու գումարի 0,5%-ի չափով (100 000-500 000 ՀՀ դրամ):
3 Անձը հաստատող այլ փաստաթղթեր՝ համաձայն ՀՀ կառավարության 22/12/1999թ.-ի թիվ 767 որոշման, բացառությամբ վերադարձի վկայականի՝ միայն ՀՀ վերադառնալու համար, և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի կամ ժամանակավոր վկայականի:

Մինչև 18 տարեկան երեխայի հաշվի բացման համար ի լրումն վերոնշյալ փաստաթղթերի անհրաժեշտ է ներկայացնել նաև

- Մինչև 18 տարեկան երեխայի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ (առկայության դեպքում), կամ ծննդյան վկայական
- Ամուսնության վկայական, եթե հաշիվը բացվում է ծնողների կողմից
- Եթե ծնողը հանդիսանում է մինչև 18 տարեկան երեխայի միակ օրինական ներկայացուցիչը, ապա այդ փաստը վկայող իրավական փաստաթուղթ (օրինակ՝ մահվան վկայական, մյուս կողմին ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի որոշում և այլն):

Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարելի է ներկայացնել Բանկի ցանկացած մասնաճյուղ: Հաշիվը բացվում է Հաճախորդի կողմից պատշաճ ստորագրված դիմումի հիման վրա և համապատասխան բոլոր փաստաթղթերի առկայության դեպքում: Բանկային հաշիվը բացվում է դիմումի և դրան առընթեր պահանջվող բոլոր փաստաթղթերի ներկայացման օրը և կարող է օգտագործվել Հաճախորդի կողմից բացման պահից: Լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու դեպքում այդ փաստաթղթերի ուսումնասիրությունը և, համապատասխանաբար, հաշվի բացումը կարող է տևել մինչև 90 օրացուցային օր:

Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել իր հաշիվը՝ այդ մասին Բանկին նախապես գրավոր ծանուցելով և ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները:

Հաշվի փակման համար որևէ վճար/տուգանք չի գանձվում:

Բանկային հաշվի փակման ընթացքում լրացվում է համապատասխան հաշվի փակման դիմումը, որտեղ նշվում են հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները: Փակվող հաշվի մնացորդը Հաճախորդին կարող է վճարվել կանխիկի, ցպահանջ մուրհակի ձևով կամ վերջինիս ցուցումով փոխանցվել այլ հաշվի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Բանկը հաշիվը փակում է համապատասխան հաշվի փակման դիմումը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ՀՀ օրենսդրությամբ կամ Բանկի ներքին ընթացակարգերով հաշվի օգտագործման կամ հաշվի փակման գործընթացը սահմանված ժամկետում կազմակերպելու հետ կապված սահմանափակումներ առկա չեն:

Զրոյական մնացորդով բանկային հաշիվները կարող են փակվել Բանկի կողմից 6 ամիս հետո:

Բանկն իրավունք ունի նաև իր նախաձեռնությամբ փակել Հաճախորդի հաշիվը, եթե վերջինս թույլ է տվել Բանկի կողմից սահմանված Հիմնական պայմանների կամ իրավական ակտերի խախտում/ներ: Այդ դեպքում հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է Հաճախորդին կանխիկի կամ ցպահանջ մուրհակի ձևով կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

3. Հաշվով հնարավոր գործառնությունները

3.1 Բանկը Հաճախորդի հետ կնքված պայմանագրի պայմաններով սահմանված կարգով և իր ներքին ակտերին համապատասխան՝ իրականացնում է հաշվի համալիր սպասարկումը և Հաճախորդի հանձնարարությամբ կատարում հաշվարկադրամարկղային գործառնություններ, մասնավորապես՝ դրամական միջոցների կանխիկ մուտք/ելքը, փոխանցումները, արտարժույթի փոխարկումները: Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի/հաշիվների մնացորդի սահմաններում, **ընդ որում Բանկը հաշվով/հաշիվներով կատարված գործառնությունների համար հաշվից/հաշիվներից գանձում է միջնորդավճարներ՝ Բանկի Ծառայությունների սակագներով սահմանված չափով:**

Էսքրոու հաշվով Էսքրոու համաձայնագրով նշվածից բացի այլ բանկային գործառնություններ չեն իրականացվում, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:

3.2 Դրամական միջոցների մուտքագրումները և դուրսգրումները կարող են իրականացվել Բանկի ցանկացած մասնաճյուղում՝ անձի ինքնությունը հաստատող բավարար փաստաթղթեր ներկայացնելու դեպքում: Կանխիկ միջոցները մուտքագրվում են բանկային հաշիվներին այդ գումարների ներկայացման պահին (եթե նախապես այլ համաձայնագիր ստորագրված չէ Բանկի և Հաճախորդի միջև): Բանկային հաշվից կանխիկ ելքագրումը կատարվում է անմիջապես՝ Հաճախորդի պահանջով (համաձայն ստորագրման հրահանգի ելքագրման իրավասություն ունեցող անձի (անձանց) պահանջով՝ մինչև 18 տարեկան երեխայի հաշվի դեպքում):

Բանկի կողմից սահմանված սահմանաչափերը գերազանցող գումարների կանխիկացման դեպքում անհրաժեշտ է 1 օր առաջ տեղյակ պահել Բանկին: Վերոնշյալ սահմանաչափերին Հաճախորդները կարող են ծանոթանալ Բանկի ցանկացած մասնաճյուղում և ինտերնետային կայքի Ծառայությունների սակագներ բաժնում:

Հաշվից հնարավոր է պատվիրել **միջազգային բանկոմատային քարտ**[1], որը Հաճախորդին հնարավորություն է ընձեռում օգտվել իր Հաշիվ(ներ)ից՝ քարտը սպասարկող ցանկացած բանկոմատի միջոցով: Բանկոմատից օգտվելու ընթացքում բոլոր հաճախորդների ինքնությունը հավաստվում է անձնական ծածկագրի միջոցով: Հաճախորդը հնարավորություն ունի 2 հաշիվ կցել 1 բանկոմատային քարտին, և մինչև 2 լրացուցիչ բանկոմատային քարտ կցել 1 ընթացիկ հաշվին:
Մինչև 18 տարեկան երեխայի հաշվի դեպքում 14-18 տարեկան երեխան, ում անունով բացվել է հաշիվը, ծնող(ներ)ի/խնամակալ(ներ)ի կողմից ստորագրված համապատասխան համաձայնության առկայության դեպքում, իրավունք ունի բանկոմատային քարտ և/կամ զրոյական սահմանաչափով կրեդիտ քարտ ստանալու, ինչպես նաև օգտվել Օնլայն/Մոբայլ և Հեռախոսային բանկային ծառայություններից:

Ընթացիկ հաշիվ ունեցող հաճախորդներին Բանկի կողմից կարող են տրամադրվել չեկային գրքույկներ, որոնց միջոցով հաճախորդները կարող են տնօրինել իրենց ընթացիկ հաշվին առկա միջոցները:

3.3 Հաշիվները կարող են տնօրինվել[2] ինչպես այցելելով բանկ, այնպես էլ Օնլայն/Մոբայլ և Հեռախոսային բանկային ծառայությունների միջոցով: Որոշ գործարքներ, ինչպիսիք են՝ կանխիկի մուտքագրումը, փոխանցումները Բանկում սպասարկվող հաշիվներին, մնացորդի ստուգումը և այլն, հնարավոր է իրականացնել նաև Բանկոմատային քարտի միջոցով՝ օգտվելով Բանկի բանկոմատներից:

Օնլայն/Մոբայլ և Հեռախոսային բանկային ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել և/կամ կնքել համապատասխան համաձայնագիր, ընդ որում Մոբայլ բանկային ծառայությանը գրանցվելու համար անհրաժեշտ է նախ և առաջ գրանցված լինել Օնլայն բանկային ծառայությանը: Իսկ Օնլայն բանկային ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է Բանկային հաշիվ:

Օնլայն/Մոբայլ բանկային ծառայություններից օգտվելու ընթացքում բոլոր հաճախորդների ինքնությունը հավաստվում է անվտանգության սարքի, օգտագործողի անվան և գաղտնաբառի համադրության միջոցով, ընդ որում՝ որոշ գործարքներ Մոբայլ բանկային ծառայության միջոցով հնարավոր է իրականացնել առանց անվտանգության սարքի՝ միայն օգտագործողի անվան և մոբայլ գաղտնաբառի համադրությամբ:

1 Միջազգային բանկոմատային քարտը հասանելի չէ Էսքրոու հաշվի դեպքում: Մինչև 18 տարեկան երեխայի հաշվի համար Քարտը կարող է տրամադրվել միայն երեխայի 14 տարին լրանալուց հետո՝ միայն ծնողի/խնամակալի համաձայնության առկայության դեպքում:

2 Էսքրոու հաշիվների տնօրինումը Օնլայն/Մոբայլ և Հեռախոսային ծառայությունների միջոցով հասանելի չէ: Մինչև 18 տարեկան երեխայի հաշվի դեպքում հաշվի հեռահար տնօրինումը հնարավոր է միայն երեխայի 14 տարին լրանալուց հետո՝ միայն ծնողի/խնամակալի համաձայնությամբ:

Գործարքների տեսակները, որոնք հնարավոր է իրականացնել առանց անվտագության սարքի, ներկայացված են Բանկի ինտերնետային կայքում www.hsbc.am:

Հեռախոսային բանկային ծառայությունից օգտվելու ընթացքում բոլոր հաճախորդների ինքնությունը հավաստվում է գաղտնաբառի և Հաճախորդին նույնականացնելու նպատակով տրվող հարցերի օգնությամբ: Օնլայն/Մոբայլ և Հեռախոսային բանկային ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություն կարող եք գտնել Բանկի կայքէջում՝ www.hsbc.am, ինչպես նաև տվյալ ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերում:

Արտարժույթի փոխանակման գործարքների դեպքում փոխանակումն իրականացվում է Բանկի կողմից գործարքի կատարման պահին տվյալ արժույթի համար սահմանված փոխարժեքով:

Հաշիվների վրա հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնություններ կատարելու դեպքում Բանկի կողմից իրականացվում է արտարժույթի փոխանակում՝ Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքներով:

Բանկի կողմից ինքնաշխատ (ավտոմատ) կերպով և սահմանված պարբերականությամբ գանձվող սպասարկման վճարների դեպքում կիրառվում է այդ արժույթի համար տվյալ օրվա ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքը:

3.4 Ընթացիկ և խնայողական հաշիվներից փոխանցումներ կատարելու նպատակով հաճախորդները Բանկին կարող են ներկայացնել համապատասխան ձևով լրացված և պատշաճ ստորագրված վճարման հանձնարարականներ: Այլ հաշիվներից փոխանցումների իրականացումը հնարավոր չէ:

Բանկն ընդունում է վճարման հանձնարարականներն իր կողմից սահմանված օրերին և ժամերին: ՀՀ դրամով ՀՀ տարածքում իրականացվելիք փոխանցումների համար մինչև ժամը 14:00-ն (Օնլայն/Մոբայլ և Հեռախոսային բանկային ծառայությունների միջոցով մինչև ժամը 15:00-ն) ներկայացված հանձնարարականները Բանկի կողմից կատարվում են նույն օրվա ընթացքում, իսկ արտարժութային վճարման հանձնարարականների համար՝ մինչև 14:00 ներկայացված վճարման հանձնարարականները Բանկի կողմից կատարվում են առավելագույնը հաջորդ գործառնական օրվա ընթացքում: Նշված ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ներկայացված վճարման հանձնարարականները համարվում են ստացված ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Բանկում սպասարկվող հաշիվների միջև փոխանցումները, որպես կանոն, կատարվում են հանձնարարականի ներկայացման պահին:

3.5 Հաճախորդի բանկային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից կայացված որոշումների հիման վրա: Հաճախորդը կարող է տեղեկացվել արգելանքի մասին՝ արգելանք կիրառելու որոշումը Բանկի կողմից կատարելուց հետո:

Առանց Հաճախորդի կարգադրության Հաճախորդի հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից կայացված որոշումների հիման վրա:

Հաճախորդը կարող է տեղեկացվել իր հաշվից միջոցների բռնագանձման մասին՝ բռնագանձման որոշումը Բանկի կողմից կատարելուց հետո:

3.6 Հաշվով կատարված գործառնությունների դիմաց կարող են տրամադրվել գործարքների օրինակներ, կրկնօրինակներ և այլ տեղեկություններ՝ համաձայն Բանկի կողմից սահմանված Ծառայությունների սակագների:

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրում է նաև քաղվածքներ ամսական պարբերականությամբ ըստ հաճախորդի և Բանկի միջև համաձայնեցված հաղորդակցման եղանակի: Քաղվածքների և այլ փաստաթղթերի տրամադրումը կարող է իրականացվել փոստով, էլ. փոստով կամ առձեռն՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում:
Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են բանկային հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Հաճախորդը պետք է ստուգի քաղվածքի ճշտությունը և հնարավոր սխալների մասին ծանուցի Բանկին՝ քաղվածքի ամսաթվից 30 օրվա ընթացքում: Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանների, ժամկետների և սակագների վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ «Ծառայությունների սակագներ» և «Հիմնական պայմաններ» տեղեկատվական ամփոփագրերում:

ՁԵՐ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԱՆՎՃԱՐ Է:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

4. Վեճերի լուծման կարգը

Հաշվի պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդն իրավունք ունի հաշիվներով նախատեսված ծառայությունների հետ կապված Բանկի նկատմամբ պահանջներն օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Բանկը հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցել 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ինչը նշանակում է, որ Բանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված որոշումներն այն պահանջների գծով, որոնց գումարը չի գերազանցել 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

5. Ավանդների հատուցման երաշխավորման պայմանները և կարգը

Հաշիվներին առկա դրամական միջոցների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն: Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ սահմանաչափերը.

- Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ՝ **16 միլիոն ՀՀ դրամ**
- Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ՝ **7 միլիոն ՀՀ դրամ**
- Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ, և եթե դրամային ավանդը գերազանցում է 7 միլիոն դրամը՝ **16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)**
- Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ, և եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է՝ **7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով):**

6. Կարևոր նշումներ

1. Բանկը կարող է Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ հավաքագրել և տրամադրել HSBC Խմբի մեջ մտնող ընկերություններին, վերջիններիս հետ համագործակցող ընկերություններին և օտարերկրյա իրավասու մարմիններին՝ ֆինանսական հանցագործությունների ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության պարտավորություններն ապահովելու նպատակով: Նշված տեղեկությունների հավաքագրման և օգտագործման կարգը և պայմանները սահմանվում են Հիմնական պայմաններին որպես Հավելված կցվող և Հիմնական պայմանների անբաժանելի մասը կազմող «Ֆինանսական հանցագործության ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և օգտագործման պայմաններ» փաստաթղթով: Այդպիսի կարգավորումներից է «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը» (ՕՀՀՀԱ), որն ուժի մեջ է մտել 2014 թ. հուլիսի 1-ից: Այս օրենսդրական ակտը, որի կիրառումն ապահովվում է Միացյալ Նահանգների կառավարության կողմից, ուղղված է հարկային համապատասխանության խթանմանը՝ կանխարգելելով, որ ԱՄՆ քաղաքացիներն իրենց եկամուտների և ակտիվների հարկումից խուսափելու նպատակով օգտվեն ոչ ամերիկյան ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա ձեռնարկություններից:
2. Համաձայն Բանկի գործունեության սկզբունքների, ներքին կանոնակարգերի և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջների, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերի պահանջների՝ Բանկն իրավունք ունի կասկածներ ունենալու դեպքում իր նախաձեռնությամբ ցանկացած հարցում կատարելու (այդ թվում՝ բանավոր) կամ պահանջելու լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր: HSBC Safeguard-ն իրենից ներկայացնում է մի շարք գործընթացների ամբողջականություն, որն ուղղված է ուժեղացնել մեր բոլոր հաճախորդների պաշտպանությունը զեղծարարություններից և ֆինանսական հանցագործություններից գլոբալ համակարգերի և գործընթացների միջոցով: Այն իր մեջ ներառում է փողերի լվացման և սանկցիաներից խուսափելու դեմ պայքարի հնարավորության ուժեղացում, քանի որ վերջիններս հաճախ հանդիսանում են բազմաթիվ ֆինանսական հանցագործությունների շարժիչ ուժը:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2024:

Բոլոր իրավունքները պահպանված են: